Ուսումնական նախագծի պլան

Դասարան՝ **10**-րդ ընդհանուր

Ղեկավար՝ Անահիտ Մկրտչյան

Առարկա (ներ)՝ Արվեստ

Նախագծի սկիզբ	1.	**Նախագծի անունը (անվանումը) << Արվեստը ծագող արևի երկրում – Ճապոնիա >>**	
	2.	Հիմնահարցը (հիմնախնդիրը) 1. Ինչպիսի՞ն է ճապոնական արվեստի առանձնահատկությունը։ 2. Ինչպե՞ս է արտահայտվում գեղեցիկի ընկալումը ճապոնական մշակույթում։ 3. Ինչես է արտահայտվում հոքուն Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ։ 4. Ինչպիսի՞ դեր ունի երաժշտությունը և պարարվեստը ճապոնական մշակույթում։ 5. Ինչպե՞ս կարող ենք մեր ձեռքերով ստեղծել ճապոնական ավանդական արվեստի նմուշներ։ 6. Ինչպե՞ս պատրաստել համատեղ ներկայացում՝ ներկայացնելով մեր ուսումնասիրածը։	
	3.	Ուսումնական տարին, կիսամյակը	2-րդ
	4.	Տևողությունը	6 շաբաթ
	5.	Ժամաքանակը	6 ժամ
	6.	Նպատակը (ները)	1. Զարգացնել աշակերտների հետաքրքրությունն ու հարգանքը ճապոնական մշակույթի նկատմամբ։ 2. Իմաստավորել արվեստի տարբեր ճյուղերի՝ գրականության, երաժշտության, կերպարվեստի փոխկապակցվածությունը։ 3. Զարգացնել ստեղծագործական մտածողությունը՝ կիրառելով ձեռք բերված գիտելիքները գործնական աշխատանքներում։ 4. Բարելավել թիմային աշխատանքի հմտությունները՝ նախագծի խմբային իրականացմամբ։ 5. Զարգացնել հաղորդակցման և ներկայացման հմտությունները շնորհանդեսի միջոցով։

	7.	Ուղղորդող հարցեր	• Ինչպե՞ս է ճապոնական արվեստը արտահայտում այս ժողովրդի մշակույթը, մտածողությունն ու աշխարհընկալումը: • Ինչ ընդհանրություններ և տարբերություններ կարող ենք նկատել հայկական և ճապոնական արվեստների միջև: • Ինչպե՞ս կարող ենք արվեստի տարբեր ձևերով՝ գրականությամբ, կերպարվեստով, երաժշտությամբ ու պարով, փոխանցել արժեքներ և գաղափարներ: • Ինչպիսի՞ հմտություններ և կարողություններ են անհրաժեշտ ճապոնական արվեստի նմուշներ ստեղծելու համար: • Ինչպե՞ս է նախագծային աշխատանքը օգնում մեզ թիմային համագործակցությամբ սովորել, ստեղծել և ինքնաարտահայտվել:
	8.	Ուսումնական նախագծի վերջնարդյունքները	Նախագծի ավարտին աշակերտները՝ Ստեղծում են **ծաղկային կոմպոզիցիաներ (իկեբանա)**՝ համադրելով գունային ներդաշնակությունը և ձևային հավասարակշռությունը: Պատրաստում են **ճապոնական երաժշտական գործիքների մոդելներ** ստվարաթղթից՝ կոտո, շահո, պիպա, բանջո, քին: Ստեղծում են **օրիգամիներ**, ուսումնասիրելով ձևի և շարժման կանոնները: Սովորում են **ճապոնական ավանդական պար**, որը ներկայացնում են նախագծի ավարտին՝ **շնորհանդեսի ժամանակ:** Զարգացնում են **թիմային աշխատանք**, **հետազոտական**, **մշակութային ընկալման**, **կազմակերպչական** և **հաղորդակցման հմտություններ:**

	9.	Ժամանակացույց	1-ին շաբաթ	1-ին շաբաթ. Ներկայացում և թեմայի մեկնարկ **Նպատակ:** Ծանոթանալ ճապոնական մշակույթի առանձնահատկություններին, նախագիծն ուսումնական համատեքստում ներկայացնել աշակերտներին **Գործունեություններ.** • Նախագծի նպատակի և վերջնարդյունքների ներկայացում: • Ճապոնիայի մշակույթի, աշխարհագրության, պատմության համառոտ ակնարկ: • Տեսաֆիլմի դիտում ճապոնական արվեստի վերաբերյալ:
			2-րդ շաբաթ	**Ճապոնական գրականություն – Հոքու և Ե. Չարենց** **Նպատակ:** Իմանալ հոքու ժանրի առանձնահատկությունները, ուսումնասիրել դրա կապը հայ պոեզիայի հետ: **Գործունեություններ.** • Ճապոնական հաքու բանաստեղծությունների ընթերցում և վերլուծություն: • Եղիշե Չարենցի բանաստեղծություններից ընտրություն՝ համեմատություն հաքու ոճի հետ: • Փորձեր՝ ստեղծել սեփական հաքուներ: • Գրական գեղարվեստական ընթերցումների անցկացում խմբերում:
			3-րդ շաբաթ	**Ճապոնական կերպարվեստ և օրիգամի** **Նպատակ:** Ուսումնասիրել ճապոնական նկարչության և ձեռքի ստեղծագործությունների դերը: **Գործունեություններ.** Ճապոնական կերպարվեստի ոճերի (սումի է, ուկիյո է) դիտում և քննարկում: Օրիգամի արվեստի ծագում, նշանակություն: Օրիգամիի պատրաստման վարպետաց դասեր:

				Աշակերտների աշխատանքների ցուցադրություն դասարանի ներսում:
			4-րդ շաբաթ.	**Իկեբանա – ծաղկային կոմպոզիցիաներ** **Նպատակ:** Զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները՝ ծաղկային արվեստի միջոցով: **Գործունեություններ** Իկեբանայի ծագում, նշանակություն ճապոնական մշակույթում: Դիտում՝ ինչպես են պատրաստվում իկեբանաներ: Գործնական դաս՝ աշակերտները պատրաստում են իրենց կոմպոզիցիան: Խմբային վերլուծություն՝ իկեբանաների կառուցվածքի ու համադրման մասին:
			5-րդ շաբաթ	**Երաժշտական գործիքներ և ճապոնական պար** **Նպատակ:** Ուսումնասիրել երաժշտության և պարի դերը ճապոնական մշակույթում, պատրաստել երաժշտական գործիքների մոդելներ: **Գործունեություններ.** • Ճապոնական երաժշտական գործիքների՝ կոտո, շահո, պիպա, բանջո, քին-ի ուսումնասիրություն: • Նրանց ստվարաթղթից պատրաստում: • Ճապոնական ավանդական պարի դիտում և առաջին փորձերը (ուղղորդող ուսուցչի աջակցությամբ): Խմբային աշխատանքների վերջնականացումը:
			6-րդ շաբաթ **Շնորհանդես – Ճապոնիան մեր աչքերով** **Նպատակ:** Վերհանել, ամփոփել և ներկայացնել կատարված աշխատանքները, զարգացնել հաղորդակցման ու ներկայացման հմտությունները:	

			Գործունեություններ. Ներկայացնում են իրենց՝ հաքուները, օրիգամիները, իկեբանաները, երաժշտական գործիքները, գեղարվեստական աշխատանքները:Ճապոնական պարի համատեղ կատարում: Վերլուծություն, ինքնաարժեում, փոխարժեում: Ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ ամփոփիչ ցուցադրություն:
Նախագի ավարտ	10.	Ուսումնական նախագծի նկարագիրը	«Արվեստը ծագող արևի երկրում» ուսումնական նախագիծը նախատեսված էր 10-րդ դասարանի աշակերտների համար և նպատակ ուներ ծանոթացնել նրանց Ճապոնիայի բազմաբնույթ և խորն արվեստին՝ համադրելով գրականությունը, կերպարվեստը, երաժշտությունը, տեխնոլոգիան և մշակութային ժառանգությունը: Նախագիծը տևեց 6 շաբաթ և իր մեջ ներառեց ուսումնագիտական, ստեղծագործական և գործնական բաղադրիչներ: Նախագծի մեկնարկին աշակերտները ծանոթացան ճապոնական մշակույթի ընդհանուր բնութագրին՝ նրա պատմական անցյալին, աշխարհագրական դիրքին և արվեստի տարբեր ուղղություններին: Գրականության ուղղությամբ ուսումնասիրվեցին ճապոնական հոքուները՝ դրանց ձևաչափը, գաղափարները, թեմատիկան, և անցկացվեց համեմատական վերլուծություն Եղիշե Չարենցի պոեզիայի հետ: Կերպարվեստի և ձեռքի աշխատանքի ոլորտում պատրաստվեցին օրիգամիներ՝ հիմք ընդունելով ճապոնական դարավոր տեխնիկաները: Բացի այդ, աշակերտները ուսումնասիրեցին ճապոնական նկարչության ոճերը՝ սումի է և ուկիյո է: Աշակերտները ձեռքով պատրաստեցին ճապոնական ավանդական երաժշտական գործիքների մոդելներ՝ ստվարաթղթից: Նրանց ստեղծած կոտոն, շահոն, պիպան ու բանջոն համալրեցին դասարանի մշակութային անկյունը: Բնության և գեղագիտության հետ կապող կարևոր փուլ էր իկեբանայի՝ ծաղկային կոմպոզիցիաների ստեղծումը: Աշակերտները կիրառեցին ձևի, տարածության, հավասարակշռության և գույնի սկզբունքները՝ պատրաստելով յուրօրինակ կոմպոզիցիաներ:

			Արվեստի ինտեգրմամբ սովորեցին ճապոնական ավանդական պարային շարժումներ, որոնք հետագայում ներկայացրին ամփոփիչ շնորհանդեսի ընթացքում: Նախագծի ավարտին կազմակերպվեց ամփոփիչ միջոցառում, որտեղ աշակերտները ներկայացրին իրենց պատրաստած գործիքները, օրիգամիները, իկեբանաները և կատարեցին ճապոնական պար: Այս նախագծի շնորհիվ աշակերտները ոչ միայն ձեռք բերեցին նոր գիտելիքներ Ճապոնիայի արվեստի վերաբերյալ, այլև զարգացրին թիմային աշխատանքի, հաղորդակցության, ստեղծագործական ու վերլուծական մտածողության հմտություններ:

	11.	Ուսումնական նախագծի ավարտուն արդյունքի /պրոդուկտի/ ներկայացման տեսակը և հետազոտության աղբյուրները։	Նախագծի ավարտին աշակերտները կներկայացնեն **բեմադրված դատավարության տեսահոլովակ**, որը կնկարահանվի և կմոնտաժվի որպես ուսուցողական և ստեղծագործական արտադրանք։ Աշակերտներն իրենց նախագծային աշխատանքում օգտվում են հետևյալ աղբյուրներից՝ • «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» (պարզեցված տարբերակ՝ տարիքին համապատասխան) ***Թվային և առցանց աղբյուրներ*** ՝ • UNICEF, Amnesty International-ի կրթական նյութեր • YouTube-ում ներկայացված կրթական տեսանյութեր մարդու իրավունքների և դատական գործընթացների մասին ***Բանավոր աղբյուրներ*** ՝ • Դասավանդողի ներկայացրած նյութերը և բացատրությունները
	12.	Գնահատում	1. Նախագծին մասնակցություն (4 միավոր) 2. Ներկայացման հմտություններ (2 միավոր) 3. Գիտելիքների ստուգում (4 միավոր)։
	13.	Տվյալ առակայի/ների/ թեմայից /ներից/ ձեռք բերված վերջնարդյունքներ	Նախագծի արդյունքում աշակերտները ծանոթանում են մարդու հիմնական իրավունքներին և սովորում դրանք կիրառել առօրյա իրավիճակներում։ Նրանք կարողանում են տարբերել իրավունքի խախտումը և արտահայտել իրենց կարծիքը պարզ ու հարգալից ձևով։ Սովորողները համագործակցում են թիմով, զարգացնում են վստահ խոսք, ստեղծում են դատավարության սցենար և ներկայացնում այն տեսահոլովակի ձևով: